

ՀՈՒՇԱԳԻՐ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԷԶՄԻԱԾԻՆ ՔԱՂԱՔԻ (ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)
ԵՎ ՎԻՍՈՎԵ ՄԻՏՈ ՔԱՂԱՔԻ (ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՄԻՋԵՎ

Հաշվի առնելով Էջմիածին քաղաքի (Արմավիրի մարզ, Հայաստանի Հանրապետություն) և Վիսոկե Միտո քաղաքի (Չեխիայի Հանրապետություն) միջև փոխշահավետ բարեկամական կապեր զարգացնելու ձգտումը,

ընդունելով, որ տնտեսական, գիտա-տեխնիկական և մշակութային կապերը զարգացնելու և ամրապնդելու պարագայում երկու կողմերը կարևոր ներդրում կունենան խաղաղության և փոխըմբռնման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության միջև բազմակողմանի հարաբերությունների զարգացման գործում՝

Էջմիածին քաղաքը և Վիսոկե Միտո քաղաքը համամիտ են հետևյալի մասին.

Հոդված 1

Կողմերը նպատակ ունեն զարգացնել համագործակցություն հետևյալ բնագավառներում՝

- մշակույթ
- կրթություն և գիտություն
- բնակչության սոցիալական պաշտպանություն
- առողջապահություն
- քաղաքային կառավարում
- Էկոլոգիա
- Էկոնոմիկա և ներդրումային գործունեություն
- քաղաքային տնտեսություն
- սպորտ
- տուրիզմ
- տեղեկատվական տեխնոլոգիաներ

Աջակցել և օժանդակություն ցուցաբերել քաղաքային հաստատությունների, կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, ձեռնարկությունների և մասնագետների միջև գործունեության տարբեր ոլորտներում հետագայում ուղիղ կապեր հաստատելուն:

Հոդված 2

Համագործակցության կոնկրետ ծրագրեր համաձայնեցնել ամեն տարի՝ նամակներ փոխանակելու միջոցով, որից կբխի համապատասխան պայմանագրի կնքումը:

Հոդված 3

Իրականացնել քաղաքների պատվիրակությունների փոխանակում և հետագա կապեր պաշտոնական ներկայացուցիչների միջև:

Հոդված 4

Իրականացնել Էջմիածին և Վիսուկե Միտո քաղաքների բնակչության կյանքի և երկու պետությունների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին տեղեկատվության փոխանակում:

Հոդված 5

Աջակցել և զարգացնել փոխշահավետ գործնական, առևտրային հարաբերություններ, նպաստել գործարարների, պատվիրակությունների փոխայցերին և համատեղ փոխշահավետ տնտեսական կապերի իրականացմանը:


Հոդված 6

Սույն հուշագիրը հիմք է հանդիսանում հետագայում ըստ հուշագրով ներկայացված ոլորտներում համապատասխան պայմանագիր կնքելու համար:
Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից: Հուշագրի տեքստի մեջ փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել կողմերի գրավոր համաձայնությամբ մինչև պայմանագրի կնքումը: Յուրաքանչյուր կողմը իրավունք ունի դադարեցնել հուշագիրը մյուս կողմին առնվազն վեց ամիս առաջ գրավոր տեղեկացնելու միջոցով:


Հոդված 7

Հուշագիրը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով, երկու բնօրինակով, ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են:

Ստորագրված է Էջմիածին քաղաքում 2013թ. փետրվարի 16-ին:

Էջմիածին քաղաքի կողմից


Էջմիածնի քաղաքապետ՝
Կարեն Գրիգորյան

Վիսուկե Միտո քաղաքի կողմից


Վիսուկե Միտոյի քաղաքապետ՝
Միրոսլավ Սուսեկ

MEMORANDUM OF COLLABORATION
BETWEEN
THE CITY OF EJMIATSIN (PROVINCE OF ARMAVIR, REPUBLIC OF ARMENIA)
AND
THE CITY OF VYSOKE MYTO (CZECH REPUBLIC)

Taking into consideration the will to develop mutually beneficial relations between the city of Ejmiatsin (Province of Armavir, Republic of Armenia) and the city of Vysoke Myto (Czech Republic),

realising that by developing and strengthening economic, scientific, technical and cultural relations, the Parties will contribute to peace and mutual understanding, as well as to the development of relations in various spheres between the Republic of Armenia and the Czech Republic

NOW, THEREFORE, in consideration of the execution of this Memorandum between the city of Ejmiatsin and the city of Vysoke Myto, it is agreed as follows:

Article 1

The parties intend to collaborate in the following fields:

Culture

Education and science

Health and social care

Ecology

Economy and investment activity

Urban development

Sport

Tourism

Information technologies

To assist and support the establishment of further direct relations in different areas between urban institutions, organizations, non-governmental organizations, companies and specialists.

Article 2

To coordinate concrete projects of collaboration every year by exchanging letters which will lead to signing of the corresponding agreement.

Article 3

To realize the exchange of city delegations and further relations between the official representatives.

Article 4

To realize the exchange of information concerning the public life of the cities of Ejmiatsin and Vysoke Myto and the activity of local authorities of two countries.

Article 5

To support and develop mutually beneficial practical, commercial relations, contribute to the mutual visits of business delegations and realization of mutually beneficial economic relations.

Article 6


This Memorandum is a base for signing further agreement concerning the areas presented in the Memorandum. The Memorandum will be effective on the day of its signing. Neither party may make changes and additions in the Memorandum without of the written consent of the other. Every party has a right to terminate the Memorandum by informing the other party at least 6 months later in written form.

Article 7

The Memorandum is executed in Armenian and English, two texts being equivalent.


Signed on February 16, 2013 in the city of Ejmiatsin.

From the city of Ejmiatsin



Mayor of Ejmiatsin
Karen Grigoryan

From the city of Vysoke Myto



Mayor of Vysoke Myto
Miloslav Sousek